ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

03-ը հուլիսի 2026թ.
ժամը 11[00]

ք. Երևան

գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Ա. Համբարձումյան,
- ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության տեխնիկական միջոցների, լոգանքի ու լվացքի պլանավորման բաժնի պետի տեղակալ՝ փոխգնդապետ Մ. Երամյան,

Բացակայում է ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի պետի տեղակալ՝ փոխգնդապետ Վ. Բարսեղյանը:

Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Տ. Աբրահամյան

« ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ. Աբրահամյան)

1. «Պրոդ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին:
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. «Պրոդ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին.

(Տ.Աբրահամյան)

1.1 Քանի որ «Պրոդ գրուպ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 02.07.2026թ ներառյալ/ չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ուստի վերջինս ՀՀ Գնումների մասին օրենքի, ՀՀ կառ. 04.05.2025թ 526-ն որոշման և սույն ընթացակարգի հրավերի պահանջների համաձայն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Պրոդ գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Տ. Աբրահամյան)

2.1 **03.07.2026թ.**-ին՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Բիգ Բուք» ՍՊԸ -ին:

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

2.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց « ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-7/17» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Համբարձումյան

Գնահատող Մ. Երամյան

Գնումները համակարգող՝ Տ. Աբրահամյան